

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻ

ՈՂԲ ՎԵՑԵՐՈՐԴ

Արդ ես չունիմ ճերմակ հանդերձ հարսնիքի,
Որո՞ւն կենաց խըմեմ գինի սափորով.
Ի՞նչպէս նստիմ դըրան առջեւ երկինքի,
Հարսին կենաց երգեր ձօնել քընարով:

Ես մենաւոր եմ քարաշէն Նարեկի,
Ե՞րբ պիտ'ըլլամ ապաշխարող սրտի տէր.
Ե՞րբ արիւնոտ՝ դըրած ծունկերս կայծքարի,
Աղիողորմ լալով կանչեմ — Արի Տէր —:

Սիրտ մ'ունիմ ես այնքան փոքրիկ եւ տըկար,
Որ ամէն ցաւ սարսուռ կու տայ մահացու,
Իմ երկինքէս սուրբեր կ'անցնին թեւապար.
Ո՞ր փառքին օր պիտ' հանդիպինք իրարու:

Ծովափին մօտ լուռ կը համբեմ միայնակ,
Անթիւ խիճեր եւ ոստրէներ եւ ժժմակ.
Բայց ո՞վ կրնար թըլել մեղքերս անառակ,
Բաղեղի պէս կուրծքիս փարած թել առ թել:

Շատ են, ո՞վ Տէր, վշտի նըման բաղմածին.
Մէկ արմատ է, հազար փըշոտ բարունակ.
Մէկ շանթ, մէկ կայծ եւ անտառներ կը վառին.
Շատ են, ո՞վ Տէր, մեղքեր մեղքի թեւին տակ:

ՈՂԲ ԵՕԹՆԵՐՈՐԴ

Վստահ եմ, ինչպէս արծիւ, թեւերուս
Անցնիլ երկինքներ.
Կը բաւէ կաթիլ մ'արցունք սրբալոյս
Մաքրելու սրտեր:

Ո՛հ, չեմ ուզեր ես պատանքուիլ մոխրով,
Երազել Գեհեն.
Ձեմ ուղեր Յիսուս տեսնել փուշերով,
Պըսակուած նորէն:

Կը սարսի մարմինս երբ ինձ վայ կարգան,
Երբ հիւսեն մեղքերս
Շուրջըս մաղէ քուրձ ոստայնի նըման.
Երբ լամ հողմաձայն:

Մի փակէք երկնի առագաստն աննիւթ.
Մուտքն ոսկի դըրան.
Քաղցր է մահանալ, երբ խիղճն անըսողիւտ
Աչք է սիրական:

ՈՂԲ ՈՒԹԵՐՈՐԴ

Գընա՛, ըսին, դընա՛ թագիր
Մեղքն ալ բանտ է.
Ճգնող եղիր, ու քուրձ հագուէ,
Մեղքն ալ ողբ է:

Աշխարհ սիրող մարդուն համար
Ծաղիկ շատ կայ.
Մահուան հրեշտակն երգով չի դար
Եղիր արդար:

Քեղ, ով իմ Տէր, խոստովանանք
Կ'ըլլամ այսօր.
Խոր վէրք ունիմ, ցաւ ու տանջանք
Տուր ինձ նոր կեանք:

ՈՂԲ ԻՆՆԵՐՈՐԴ

Թէ դաշտերն անհուն, թէ լիճն այս անծայր,
Ըլլային մատեան եւ կապոյտ թանաք.
Եւ ես այս վանքին նստած քիւին տակ
Ողբեր դըրէի, լայի անդադար:

Ոչ մէկ արտասուք յագուրդ պիտի տար,
 Ոչ մէկ արեղակ ճաճանչ աչքերուս.
 Ինչպէս թըզենին զոր չորցուց Յիսուս,
 Պիտ'անցնէր քովէս այրած ճանապարհ:

Պիտի խնդրէին մերդ ու մեղր եւ կաթ,
 Ամլացած ծառէն, սայրասուր փուշէն.
 Բայց կողիս անէծքն ու մեղքն անօրէն,
 Սէրերըս տարին, թողին անապատ:

Կարօտ եմ ես Տէր, մատներուդ աղուոր,
 Զնջելու անյոյս ամպեր մը թռլթեան.
 Յօղըդ օրհնարեր եւ շունչըդ դարնան,
 Թող ըլլան ինձ կեանք, արշալոյս բոսոր:

ՈՂԲ ՏԱՍՆԵՐՈՐԴ

Երթալ կ'ուզեմ անձուկ ճամբան սրբութեան,
 Թող զիս խոցէ թշնամին.
 Թող սուր փուշեր իմ արիւնէս յագենան,
 Զեմ խոնարհիր ես հողին:

Զեռքն Աստուծոյ ինձ անաղմուկ կ'երկարի,
 Կեանքն արշալոյս կը փոխուի.
 Կը վերանամ անմահութեան իրրեւ խունկ,
 Իրրեւ հաւատք անյեղի:

Սրտիս մէջ ողբ, սրտիս մէջ յոյս ցանեցէք,
 Որ մօտն ըլլամ Աստուծոյ.
 Մանանելի հատիկ մ'ափիս մէջ դըրէք
 Փոխելու յոյսը սիրոյ:

Հ. ՎԱՀԱՆ ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆ

ՀԱՅՈՅ ՈԳԻՆ

(ՄԱԿՆԻՍ ԱՐՔԱՆ)

Այսպէս խօսեց իմ երդը նոր,
 Իմ հին երդի խորհուրդը խոր:

— Ո՞վ է ասում թէ էլ չկայ
 Հայոց երկրում ոչ մի արքայ,
 Այն էլ՝ անթաղ եւ անմարմին,
 Նման անտես ուղեղարմին:

Հապա այսօր
 Այն ո՞վ է, որ
 Գահընկեցուած Մասիսն յիշում,
 Յրուած աղբին տուն է քաշում,
 Որ տուն բերէ
 Սարերն էլ լեհ:

Մասիսն էլի թագադրէ...
 Ինչ էլ ասէք՝ ես եմ հայկեան
 Աղբն հաւաքող Մակնիս արքան:
 Արքան՝ թէկուզ մի որբ աղբի,
 Այն էլ դարում այս մոլեղնած,
 Երբ կայծակով բիւրոց բազկի
 Արքաներն էն գահընկեցուած:
 Ինձ չեն կարող գահընկեցել
 Թէկուզ դարում այս օձենի,
 Ինձ Աստուած է արքայ օձել,
 Օղբի էլ սուրբ՝ անխոցելի:
 Ամէն հայի սրտում էլ հեղ
 Անգահընկեց արքան եմ ես.
 Թէկուզ այժմ առանց դահի,
 Անդայիտն, անթաղուհի,